ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2024 թվականի N 0279-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 13-Ն հրամանի 11 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2024 թվականի մարտի 19-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթներ.

ա)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-8/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2024 թվականի մարտի 19-ին ժամը 10:00-ին, ք. Արմավիր Հանրապետության 32 հասցեում.

բ)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-2/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2024 թվականի մարտի 19-ին ժամը 12:00-ին, ք. Արմավիր Հանրապետության 32 հասցեում.

2.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Սաթենիկ Մարտիրոսյանին՝ կազմել մրցույթի հայտարարության տեքստերը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:

3.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմին (Նուշիկ Դավթյան)՝ համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, հանձնաժողովի աշխատակարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

4.Մրցույթների անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջին կարգի մասնագետ Նոյեմի Խաչատրյանին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. փետրվարի 19
ք. Արմավիր